ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40

«30» հուլիսի 2018 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-052-0107-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.9 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ «ԷԶՈՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ին N 286 որոշման հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 44-րդ կետի «ը» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2018 թվականի հունիսի 18-ի N 65-Ա հրամանով «ԷԶՈՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 2013 թվականի օգոստոսի 28-ի N ՇԱԹ-29/444 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը (փոփոխությունը՝ 18 հունիսի 2018 թվական), N Լ-444 լեռնահատկացման ակտը (փոփոխությունը՝ 18 հունիսի 2018 թվական), օգտակար հանածոների արդյունահանման ընդերքօգտագործման 2013 թվականի օգոստոսի 28-ի N Պ-444 պայմանագիրը (փոփոխությունը՝ 18 հունիսի 2018 թվական) և «ԷԶՈՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահրամ Վանիկի Սիմոնյանի լիազորված անձ՝ Ասատուր Սաունիկի Ղազարյանի դիմումը

Scanned by TapScanner

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի (Կապս բնակավայր) սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-052-0107-0005 կադաստրային ծածկագրով 2.9 հեկտար հողամասը Քարափի տուֆերի և բազալտի քարերի արդյունահանում կազմակերպելու նպատակով 45 տարի ժամկետով, 300000 /երեք հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ԷԶՈՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2.Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՆՈՒԿ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՂԱՖԱՐՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՍԱՀԱԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«30» հուլիսի 2018 թվական
գյուղ Մայիսյան

Scanned by TapScanner